

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա  
դպրոցական փուլ - տևողությունը – 100 րոպե

11 - 12 – րդ դասարաններ  
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Երկրի օրական պտույտի հետևանք չէ.

- |  |                                |
|--|--------------------------------|
| 1. գիշերվա և ցերեկվա հերթափոխը,          | 2. ժամերի տարբերությունը,      |
| 3. օդի ջերմաստիճանի օրական փոփոխությունը | 4. տարվա եղանակների հերթափոխը: |

2. Բողոքականությունը լայն տարածում չունի.

- |                               |                               |
|-------------------------------|-------------------------------|
| 1. ԱՄՆ-ում և Նոր Զելանդիայում | 2. Կանադայում և Ավստրալիայում |
| 3. Մեծ Բրիտանիայում և ՀԱՀ-ում | 4. Բուլղարիայում և Սերբիայում |

3. Երկրի տրանսպորտային համակարգը ձևավորվում է.

- |                                       |                               |
|---------------------------------------|-------------------------------|
| 1. տրանսպորտային ձեռնարկություններից, | 2. հաղորդակցության ուղիներից, |
| 3. տրանսպորտային միջոցներից,          | 4. բոլոր վերը թվարկածներից:   |

4. Ո՞ր դարաշրջանում է տեղի ունեցել կալեդոնյան ծալքավորությունը.

- |             |                |                  |               |
|-------------|----------------|------------------|---------------|
| 1. Արխեյան, | 2. Պալեոզոյան, | 3. Պրոտերոզոյան, | 4. Մեզոզոյան: |
|-------------|----------------|------------------|---------------|

5. Բնութագրումով որոշել մեթոդը.

Աշխարհագրության գիտական ճանաչողության այդ մեթոդը ծագել է նրա հետ մեկտեղ և հարյուրամյակներ շարունակ եղել է աշխարհագրական գիտելիքների ձեռքբերման միակ աղբյուրը: Ո՞ր մեթոդն է.

- |                                |                  |
|--------------------------------|------------------|
| 1. համեմատական – աշխարհագրական | 2. նկարագրական   |
| 3. դաշտային (արշավախմբային)    | 4. քարտեզագրական |

6. Աշխարհագրության արդի խնդիրներից չէ (չեն).

1. երևույթների հետևանքների կանխատեսումը,
2. հայտնագործությունները և աշխարհի նկարագրությունը,
3. երևույթների բացատրությունները,
4. երևույթների առաջացման պատճառների պարզաբանումները:

7. Զարգացած երկրներում «գիտություն – կրթություն – արտադրություն» համակարգի ձևավորման շնորհիվ սկսեցին առաջանալ.

- |                           |                           |
|---------------------------|---------------------------|
| 1. տեխնոպոլիսներ          | 2. գիտակրթական համալիրներ |
| 3. տեխնոլոգիական շրջաններ | 4. տեխնածին լանդշաֆտներ   |

8. Ինչպե՞ս են կոչվում հարավային կիսագնդի պասսատները.

- |                    |                  |                  |                    |
|--------------------|------------------|------------------|--------------------|
| 1. հյուսիսարևմտյան | 2. հարավարևմտյան | 3. հարավարևելյան | 4. հյուսիսարևելյան |
|--------------------|------------------|------------------|--------------------|

9. Զրապառռոլ է համարվում.

- |                        |                          |
|------------------------|--------------------------|
| 1. ջրային էներգետիկան  | 2. ջրային տրանսպորտը     |
| 3. գյուղատնտեսությունը | 4. ձկնային տնտեսությունը |

10. <<Երկիր – տնտեսական մասնագիտացման ճյուղ>> գույգերից ընտրել ճիշտը.

- |   |                                      |
|---|--------------------------------------|
| 1. Իրան – մեքենաշինություն                | 2. Ճապոնիա – նավթարդյունաբերություն  |
| 3. Գերմանիա – քիմիական արդյունաբերություն | 4. Իրաք – գունավոր մետաղաձուլություն |

11. Սանկտ – Պետերբուրգում (հյուսիսային լայնության 60°) հունիսի 22-ին, կեսօրին, Արեգակի ճառագայթների անկման անկյունը կազմում է.

- |          |          |          |          |
|----------|----------|----------|----------|
| 1. 40.5° | 2. 53.5° | 3. 43.5° | 4. 63.5° |
|----------|----------|----------|----------|

**12. Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունների անվանումների և դրանց բնութագրերի համապատասխանությունը n<sup>o</sup> շարքում է տրված.**

- |                  |  |
|------------------|--|
| ա. Բասենի դաշտ   | 1. Այստեղ են միախառնվում Արևելյան և Արևմտյան Եփրատները:<br>Այստեղ է Քեբանի խոշոր ջրամբարը: |
| բ. Երզնկայի դաշտ | 2. Արևմտյան Եփրատի վերնագավառում, 1800-2000 մ բարձրության վրա դաշտի հատակը հարթ է:         |
| գ. Կարնո դաշտ    | 3. Տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում և ծածկված է բերրի սևահողերով:                |
| դ. Խարբերդի դաշտ | 4. Լեռնաշխարհի երկրաշարժավտանգ շրջաններից է և տարածվում է Արևմտյան Եփրատի միջին հոսանքում: |
- 
- |                               |                               |
|-------------------------------|-------------------------------|
| 1. ա – 1, բ – 3, գ – 2, դ – 4 | 2. ա – 3, բ – 4, գ – 1, դ – 2 |
| 3. ա – 1, բ – 4, գ – 2, դ – 3 | 4. ա – 3, բ – 4, գ – 2, դ – 1 |

**13. Արցախի մասին n<sup>o</sup> թ պնդումն է ճիշտ.**

1. Տրանսպորտի հիմնական տեսակը երկաթուղայինն է:
2. Շուշիում է Գանձասարի վանքային համալիրը:
3. Մարտունին և Ստեփանակերտը երկաթուղային կայարաններ են:
4. Գորիս – Բերձոր – Ստեփանակերտ ավտոխճուղին անցնում է Լիսագորի լեռնանցքով:

**14. Ո՞ր պնդումն է սխալ.**

1. ՀՀ արդյունաբերության առաջատար ճյուղերից էմետաղաձուլությունը:
2. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ՀՀ արդյունաբերության խոշոր ձեռնարկություններից մեկն է:
3. ՀՀ մետաղաձուլական համալիրի բոլոր ենթաճյուղերն ունեն տեխնոլոգիական ավարտուն ցիկլ:
4. Մինչև 1988 թ. Ալավերդու պղնձաձուլարանը տարեկան արտադրում է 30 - 40 հազ. տ մաքուր, ռաֆինացված պղինձ:

**15. Ո՞ր երկրի էներգետիկական հաշվեկշռում առավել մեծ բաժին ունեն ատոմային էլեկտրակայանները.**

- |             |            |           |                 |
|-------------|------------|-----------|-----------------|
| 1. Գերմանիա | 2. Ֆրանսիա | 3. Իտալիա | 4. Մեծ Բրիտանիա |
|-------------|------------|-----------|-----------------|

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 420 000 ցենտներ, իսկ ցանքատարածությունների մակերեսը՝ 12 000 հեկտար: Որքա՞ն կլինի միջին բերքատվությունը:
17. Գետի երկարությունը 200 կմ է, ակունքի բացարձակ բարձրությունը՝ 3000 մ, իսկ գետաբերանինը՝ 800 մ: Որոշել գետի թեքությունը:
18. Երկրի բնակչության թիվը 8 մլն է, իսկ բացարձակ աճը՝ 40 000 մարդ: Որքա՞ն է բնակչության բնական աճի գործակիցը:
19. Երկրի նավթի պաշարները կազմում են 660 մլն տոննա, իսկ տարեկան հանույթը՝ 3 մլն տոննա: Որոշել երկրի ռեսուրսապահովվածությունը (տարի):
20. Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը  $-12^{\circ}$  է, իսկ նույն պահին ստորոտում՝  $+6^{\circ}$ : Օդի ճնշումը գագաթին 280 մմ է: Որքա՞ն կլինի օդի ճնշումը լեռան ստորոտին (հաշվարկը կատարել  $6^{\circ}$ -ով):

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Արսեն Գրիգորյան